

6989



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Տիգրան Գաբրիելյան



2024թ

06.06.2024

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 089 - 24**

Նախաձեռնող՝

**Վ. Թումանյան**  
ք. Երևան, Կենտրոն, Դեմիրճյան փ., 17 Ա 2., 22 բն.

Գործունեությունը՝

**Պտղնի գյուղի 23-րդ փողոց 4 հողամաս հասցեում  
ավտոգազալցաճնշակայանի կառուցում  
Կոտայքի մարզ**

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 089 - 24

«20» հունիսի 2024թ.

**Պողոնի գյուղի 23-րդ փողոց 4 հողամաս հասցեում ավտոգազացանձակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝

Վ. Թումանյան

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Տեղադրման վայրը՝

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Պողոնի բնակավայր

**Ներածական մաս.**

Վ. Թումանյանի կողմից նախատեսվող ավտոգազացանձակայանի կառուցումը նախատեսվում է Աբովյան համայնքի Պողոնի գյուղի 23-րդ փողոց 4 հողամաս հասցեում:

Նախատեսվող ավտոգազացանձակայանի կառուցման համար հիմք են հանդիսացել՝ 2023թ. փետրվարի 3-ի N84 նախագծային առաջադրանքը, անշարժ գույքի վարձակալության 11/07/2023թ. ս/մ 2465 պայմանագիրը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-150-Ն, այսուհետ՝ օրենք/՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի բ. ենթակետի՝ նախատեսվող գործունեության հանդիսանում է Բ կատեգորիայի: Նախատեսվող գործունեությունն իրականացվել է 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան, հիմք ընդունելով ՀՕ-150-Ն օրենքի պանաջները՝ մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի դրույթները:

Հողմասի տարածքի կադաստրային ծածկագիրն է՝ 07-054-0332-0008, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալության:

**Նկարագրական մաս** Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Հրազդան գետի բարձրադիր ափին մարզկենտրոնից 37 կմ հարավ-արևմուտք, ծովի մակարդակից 1330 մ բարձրության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշող ռելիեֆային հիմնական տարրերից են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը:

Գործունեության տարածքում ըստ ֆոնդային տվյալների մինչև 7 մ խորությամբ ստորգետնյա ջրեր չեն հայտնաբերվել, ֆիզիկաերկրաբանական վտանգավոր









Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների համար նախատեսված է պարզագույն թաքստոց /0,00 նիշ, 1-ին հարկ/, որը տեղակայված է օպերատորականի շենքում խուլ պատերով, ինչը կապահովի պատասխարվողների պաշտպանությունը:

Նախատեսվող կայանի տարածքում սպասասրահ չի նախատեսվում, քանի որ նախատեսվող ԱԳԼՃ կայանի հարևանությամբ գոյություն ունեցող հեղուկ վառելիքի կայանի տարածքում արդեն իսկ առկա է սպասասրահ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ են՝

- տարածքի ընդհանուր մակերես՝ 4928.0 քմ,
- կանաչապատման մակերես՝ 1368.0 քմ /27.76%/,
- կառուցապատման մակերես՝ 1103.5քմ /22.4%/,
- բարեկարգման մակերես՝ 2456,5 քմ /49.84/:

Տարողությունների կառուցվածքը և տեղադիրքը թույլ կտա իրականացնել լիցքավորման փողրակների ինչպես աջ, այնպես էլ ձախ տեղադրվածություն ունեցող մեքենաների լիցքավորումը, այդ պատճառով էլ ԱԳԼՃ-ի տարածքում ավտոմոբիլների հանդիպակաց երթևեկություն չի նախատեսվում:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ՝ 828 մ<sup>3</sup> և ետլիցք՝ 250 մ<sup>3</sup>, ավելացած 578 մ<sup>3</sup> հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի հետ համաձայնեցված վայր:

Բետոնը շին.հրապարակ կբերվի պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրամատակարարումը կիրականացվի հատուկ նախատեսված ավտոմեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի գազամատակարարումը  $Q=4000$  մ<sup>3</sup>/ժամ ծախսով և  $P=0.7$  ՄՊա ճնշմամբ հնարավոր է իրականացնել «Ջրվեժի» ԳԲԿ-ն սնող (Dպ-300) կողմնատար-գազատարից:

Ավտոգազալցաճնշակայանի ջրամատակարարումը կիրականացվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ընկերության կողմից, հողամասից մոտ 930 մ հեռավորությամբ անցնող  $d=100$ մմ ջրագծից: Հակահրդեհային միջոցառումների համար նախատեսված է հակահրդեհային ջրամբար 100 խմ տարողությամբ:

Բանվորական և անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Կայանում կառաջանան միայն կենցաղային կեղտաջրեր, որի համար կնախատեսվի 8.75 քմ մակերեսով, 2.5 մ խորությամբ անջրթափանց սեպտիկ /բետոնապատ/ հոր, կենցաղային կեղտաջրերը հատուկ մեքենաներով կհեռացվեն կոյուղու ցանց:

Տարածքում նախատեսվում է կառուցել ենթակայան, որը աշխատելու է չոր եղանակով, ինչը բացառում է բանեցված յուղերի, քսայուղերի առաջացումը:

Նախատեսված է նաև ճնշակայանի էլեկտրասնուցում, օպերատորային մասնաշենքի լուսավորություն, լցայունակների լուսավորություն, արտաքին լուսավորություն, շանթապաշտպանություն և հողանցում, որոնց տեխնիկական լուծումները տրված են հայտում:

Հայտով նախատեսվում է շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը, նախատեսվում է սիզախոտ և թփեր: Կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ 300 մ<sup>3</sup> հողաբուսաշերտի ձեռքբերումը կհամաձայնցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ, այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված թփուտային բուսականության



բարձր աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով կնախատեսվի մոնիթորինգի իրականացում:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն արտանետումների հետ, որոնք են՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում,
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքներից առաջացող հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու, մեղմելու նպատակով նախատեսված են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են.

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքի ցանկապատում,
- շինարարական աշխատանքների/փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,

- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կարգավորման իրականացում, պարբերաբար ստուգում,

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

- շինհրապարակից դուրս գալուց առաջ շինտեխնիկայի անվադողերի լվացում,

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում են.

- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի և անվադողերի լվացումից առաջացած կեղտաջրերի ուղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,

- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ ապահովվում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար՝ ավազի կամ մանրախճի տեղադրում, մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քայուղերի արտահոսքի դեպքում՝ փոված ավազի կամ մանրախճի տեղափոխում համապատասխան աղբավայր և փոխարինում նորով,

- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված



աղբավայր,

- տարածքի բարեկարգում և մաքրում շինաղբից:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են հակահրդեհային, այդ թվում նաև մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են արտակարգ իրավիճակների պատրաստվածությանը, աղմուկի և թրթռման նվազեցմանը, թափոնների կառավարմանը:

Նախատեսվող գազալիցքավորման կայանում կառաջանան արտադրական թափոններ՝ մուտքային սեպարատորներում՝ որտեղ գազը կմաքրվի մեխանիկական մասնիկներից և խոնավությունից, խոնավագտիչում՝ որտեղ գազը կմաքրվի կաթիլային խոնավությունից, գտիչներում՝ գազը՝ յուղից: Թափոնների քանակը կկազմի 180 կգ/տարի և կազմված կլինի սիլիկագել յուղի նյութերից:

Կոմպրեսորային բաժնում տեղադրված յուղորսիչներում կլանված յուղը կհավաքվի մետաղյա տարողություններում, կպահվի փակ շինությունում և կօգտագործվի գազալցակայանի սարքավորումների շարժիչների յուղման նպատակով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող: Թափոնների ծածկագրերի, քանակի, վտանգավորության դասի, նախատեսվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է հայտի համապատասխան բաժիններում:

Շինարարական աղբն ամբողջությամբ նախատեսվում է տեղափոխել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կայանի շահագործման ընթացքում առաջացած կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից: Տարածքում նախատեսվում է տեղադրել աղբանոթներ և աղբի կոնտեյներներ:

Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման փուլերի ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր կհանդիսանա ավտոտրանսպորտային միջոցները:

Գազալցակայանի ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում աղմուկի մակարդակը չի լինի զգալի և հարակից տարածքում չի գերազանցի թույատրելի նորմերը:


Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակում շահագործման ապահովում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և կարգավորում և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ արտանետվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով՝ տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:





4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անագմ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 875 հազ. ՀՀ դրամ:

**Պարճառարանական մաս.** օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության փուլերում, Կոտայքի մարզի Պտղնի գյուղի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
2. Անհրաժեշտ է ապահովել նախնական գնահատման հայտով նախատեսված կանաչապատման աշխատանքների իրականացումը և կանաչ տարածքների խնամքը: Շինարարական աշխատանքներն իրականացնելիս տվյալ հողատարածքում նախագիծ և շինարարական աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է խստագույնս պահպանել անվտանգության գոտու չափսերը: 0.0533 հա հատվածում բացառել կառուցապատման աշխատանքները, ինչը ամրագրված է նաև հայտում:
3. Ապահովել ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի XVI բաժնի 311-րդ կետով սահմանված պահանջները:
4. Պահպանել կառուցման և շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները՝ համաձայն Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Ատոգազալցակայանների կառուցման և շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները սահմանելու մասին» N 1131-Ն որոշման:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
7. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ



կետի՝ «Աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

## ԵՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Վ. Թումանյանի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Պտղնի գյուղի 23-րդ փողոց 4 հողամաս հասցեում ավտոգազալցաճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան